

ԿԱՐԾԻՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Չինար Վահանի Ներսեսյանի «Հայաստանի Հանրապետության բնակավայրերով անցնող միջպետական նշանակության ավտոճանապարհների երթևեկության անվտանգության բարձրացումը» թեմայով ատենախոսության վերաբերյալ, որը ներկայացված է Ե 23.03 - «Շենքերի և կառույցների ճարտարագիտական (էներգետիկ, հիդրավլիկ և այլն) ապահովում» մասնագիտությամբ տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

ՀՀ-ում բոլոր միջպետական նշանակության ավտոճանապարհներն անցնում են բնակավայրերով: Ավտոճանապարհների տրանսպորտաշահագործական ցուցանիշների վրա բնակավայրերի ազդեցությունն արտացոլվում է նրանով, որ ավտոմոբիլների արագությունները և վարորդների կողմից ընտրված անվտանգ երթևեկության ռեժիմները տարբերվում են բնակավայրերից դուրս հատվածներից: Երթևեկության ռեժիմների վրա իրենց ազդեցությունն ունեն ճանապարհի տարրերը: Կարևոր է վերլուծել այդ հատվածներում երթևեկության հարմարավետությունը, արագությունը և թողունակությունը:

Ճանապարհատրանսպորտային պատահարների (ՃՏՊ) վերլուծությունը ցույց է տվել, որ միջպետական նշանակության ճանապարհներին տեղի ունեցած պատահարների մոտ 32.6%-ը տեղի է ունեցել բնակավայրերում կամ նրանց ազդեցության գոտում: Վերջին 10 տարիներին բնակավայրերում 1 կմ ճանապարհահատվածին միջինը տեղի է ունեցել 9.6 ՃՏՊ, իսկ ուղեմասերում՝ 4.6 (մոտ 2 անգամ ավելի), որը հաստատում է բնակավայրերում երթևեկության անվտանգության խնդրին ուշադրության արժանացմանը:

ՀՀ-ում ամեն տարի տեղի ունեցող ՃՏՊ-ներից գոհվում են միջինը՝ 300÷350 մարդ և մարմնական տարբեր աստիճանի վնասվածքներ են ստանում 5800÷6800 մարդ:

Գործնական ուսումնասիրությունները կատարվել են Մ1՝ Երևան-Գյումրի- ՀՀ սահման (Բավրա), Մ2՝ Երևան-Երասխ- Նորավան - Տաթև-Կապան - Մեղրի - ՀՀ սահման, Մ3՝ ՀՀ սահման (Մարգարա)-Վանաձոր-Տաշիր- ՀՀ սահման, Մ6՝ Վանաձոր - Ալավերդի- ՀՀ սահման (Բազրատաշեն), Մ10՝ Սևան-Մարտունի-Վարդենիս - ՀՀ սահման միջպետական նշանակության ավտոճանապարհների վրա, որտեղ դիտվում են առավել բարձր երթևեկության ինտենսիվություններ:

Ճանապարհային անվտանգության ոլորտում կառավարման որոշումների որակը և արդյունավետությունն անմիջականորեն կախված են ճանապարհային երթևեկության վթարների տվյալների վերլուծության խտության և ամբողջականության, դրանց

նրանց մոտեցումներում, միջպետական նշանակության ավտոճանապարհների «սև կետերի» հայտնաբերման, վերլուծության և բարելավման միջոցառումների իրականացման նպատակով, տրանսպորտային հոսքի խտության փոփոխման օրինաչափության և երթևեկության այլ բնութագրերի վերաբերյալ: Ռիտարկումները իրականացվել են Մ1, Մ2, Մ3 ավտոճանապարհներին գտնվող բնակավայրերի սահմաններում և նրանց մոտեցումներում: Հետազոտությունների ընթացքում ուսումնասիրվել են երթևեկության հիմնական բնութագրերի (խտություն, ինտենսիվություն, արագություն) փոփոխման օրինաչափությունները, որոնք էական նշանակություն ունեցող ճանապարհային երթևեկության անվտանգության բարձրացմանն ուղղված միջոցառումների մշակման համար:

Երրորդ գլխում ներկայացված է բնակավայրերով անցնող ավտոճանապարհների երթևեկության անվտանգության գնահատման մաթեմատիկական մոդելավորումը: Կատարվել է առաջընթացիկին հետևելու գործընթացի վերլուծություն: Ներկայացվել է նմանակման ալգորիթմները և մոդելի ծրագրային իրացումը: Բնակավայրերի սահմաններում երկգոտի ավտոճանապարհներին տրանսպորտային հոսքերի երթևեկության մոդելավորման արդյունքներով պարզվել է, որ խտությունից կախված գոտու թողունակության մեծությունը տատանվում է 1100÷1900 ավտ/ժ-ի սահմաններում: Այդ տատանման միջակայքը կախված է նաև երթևեկելի մասի եզրից կառույցների տարբեր հեռավածությունների դեպքում:

Չորրորդ գլխում մշակվել են բնակավայրերով անցնող ճանապարհահատվածների վրա երթևեկության անվտանգության բարձրացման գործնական առաջարկներ և բնակավայրերի սահմաններում տրանսպորտաշահագործական ծախսերի որոշման եղանակները:

Վթարայնության վերլուծության արդյունքներով առաջարկվել են վթարայնության հարաբերական լրացուցիչ մասնակի գործակիցներ, որոնք հաշվի են առնում բնակավայրերի սահմաններում ճանապարհի երկարությունը և երթևեկելի մասի եզրից մինչև կառույցը եղած հեռավորությունը:

Ներկայացված է բնակավայրերում երթևեկության անվտանգության բարձրացման միջոցառումներ, որոնք ներառում են՝ հետիոտնային անցումները, շրջանցման ճանապարհների կառուցումը, բնակավայրերում երթևեկության կազմակերպման տեղային մեթոդների կիրառումը:

Այսպիսով, ՀՀ բնակավայրերի սահմաններում միջպետական նշանակության ավտոճանապարհների վթարայնության վերլուծությունը, ավտոմոբիլացման տեմպերի, բնակավայրերի երկարությունից և երթևեկելի մասի եզրից մինչև կառույցը եղած հեռավորությունից կախված վթարայնության վերաբերյալ հետազոտությունները,

բնակավայրերի սահմաններում տրանսպորտային հոսքերի մաթեմատիկական վերլուծական նկարագրումը հնարավորություն են տվել մշակել գործնական առաջարկություններ՝ բնակավայրերի սահմաններում միջպետական նշանակության ավտոճանապարհների երթևեկության անվտանգության և թողունակության բարձրացման համար, որոնք կարող են երաշխավորել տվյալ հատվածների վթարայնության մակարդակի նվազեցումը:

Աշխատանքի վերաբերյալ դիտողությունները.

1. Աշխատանքում բնակավայրերում աղմուկի աստիճանը չափվել է, բայց վերլուծություն չի իրականացվել:
2. Ատենախոսական աշխատանքում քննարկված է անցումա-արագացման գոտիների ազդեցությունը երթևեկության անվտանգության վրա, բայց նրանց պարամետրերի համապատասխանությունը ՀՀ Շինարարական նորմերին չի դիտարկված:
3. Ատենախոսական աշխատանքում չի ներկայացված ավտոմոբիլների միջև միջակայքերի փաստացի բաշխման ազդեցությունը վթարայնության վրա: Հետազոտությունները հիմնականում իրականացվել են 200-400 ավտ/ժ, 400-600 ավտ/ժ երթևեկության ինտենսիվության պայմաններում ստացված արժեքներով:
4. Անդրեվրոպական ճանապարհային ցանցի մաս են հանդիսանում նաև H-63 (<-63') Շվանիժոր-Նոնաժոր-<Հ սահման և H-49 (<-49') Մ-2 (Կապան)-Ծավ- Մ-2 (Մեղրի) ճանապարհները, որոնց վերաբերյալ հետազոտություններ և ուսումնասիրություններ չկան:

Եզրակացություն

Չինար Վահանի Ներսեսյանի «Հայաստանի Հանրապետության բնակավայրերով անցնող միջպետական նշանակության ավտոճանապարհների երթևեկության անվտանգության բարձրացումը» թեմայով ատենախոսությունը ավարտուն գիտական աշխատանք է, որում կատարված բազմապիսի տեսական և փորձարարական հետազոտությունների հիման վրա կատարվել են գործնական առաջարկություններ, որոնք կբարձրացնեն բնակավայրերի սահմաններում միջպետական նշանակության ավտոճանապարհների երթևեկության անվտանգությունը:

Հետազոտական արդյունքները կարող են օգտագործվել երթևեկության անվտանգության հիմնախնդիրներով զբաղվող պետական գերատեսչական մարմինների, ճանապարհաշինարարական և շահագործական, նախագծային կազմակերպությունների, պարեկային ոստիկանության կողմից:

Ատենախոսության հիմնական դրույթները հրապարակված են 13 տպագիր գիտական հոդվածներում:

Սեղմագիրը և տպագրված աշխատանքները լիովին արտացոլում են ատենախոսության հիմնական բովանդակությունը:

Հաշվի առնելով շարադրվածը, գտնում եմ, որ Չինար Վահանի Ներսեսյանը կայացած գիտական աշխատող է, ներկայացված «Հայաստանի Հանրապետության բնակավայրերով անցնող միջպետական նշանակության ավտոճանապարհների երթևեկության անվտանգության բարձրացումը» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և դրա հեղինակ Չինար Վահանի Ներսեսյանը արժանի է ե.23.03 - «Շենքերի և կառույցների ճարտարագիտական (էներգետիկ, հիդրավիկ և այլն) ապահովում» մասնագիտությամբ տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝
ՀԱԱՀ-ի «Ավտոտրակտորների և
գյուղատնտեսական մեքենաներ»
ամբիոնի վարիչ, տ.գ.դ. - Կարեն Խոսրոսյան



Ա.Ա. Եսոյան

Ա.Ա. Եսոյանի ստորագրությունը հաստատում եմ,
ՀԱԱՀ գիտական ընտրող ար. գ.գ.թ. - Բոգետ

Գ.Վ. Ավագյան